26.928

Ա. ՅԱԳՈԴԻՆՍԿԻ
Գ. ՎԱԿՍԲԵՐԳ

# ՊԱՐՏԱՏՈՄՍԱՏԻՐՈՋ ԳՐՊԱՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

336
Յա-12

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ „ՀԱՅՏԵՂԵԿԱՆՔ"-Ի

ՅԵՐԵՎԱՆ 1935 Թ.

Краснозн. тип. им. А. Ф. Мясникова
Изд-во «Зари Востока» Тифлис

26928
09.07.2013

Տեխ. խմբագիր Ս. ԴՈՎԼԱԹՅԱՆ
Սրբագրիչ
Գլավլիտ հ. 91443
Տիրաժ 5000
Պատվեր 550

8347-53

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԹԻՖԼԻՍՈՒՄ

Краснозн. тип. им. А. Ф. Мясникова.
Изд-ва «Заря Востока» — Тифлис

336
3Ա-12
05 JAN 2010

# ՆԵՐԱԾԱԿԱՆ

Մեր պետական փոխառությունները մոբիլիզացիայի յեն յենթարկում աշխատավորության միջոցները՝ սոցիալիստական շինարարության համար:

Դրանով իսկ նրանք օժանդակում են մեր յերկրի աշխատավորության առաջ դրված հիմնական խնդրի լուծումը—հասնել և անցնել առաջավոր կապիտալիստական յերկրներից՝ տեխնիկապես և տնտեսապես:

Սոցիալիզմի կառուցումը մեր յերկրում, իրականանում է կապիտալիստական թշնամական շրջապատում, սոցիալիստական շինարարության հաջողություններից առաջացած դասակարգային սրված պայքարի պայմաններում—յերկրի ներսում և աջ ու «ձախ» օպորտունիստների հակագործողությունների պայմաններում:

Վերջին փոխառության իրացման կամպանիան, մի ավելորդ անգամ ապացուցում է, վոր աշխատավորական միլիոնավոր մասսաները հիանալի կերպով ըմբռնում են այն դերը, վորը պատկանում է փոխառություններին—սոցիալիստական հարձակումն իրականացնելու գործում:

Բավական է նշել, վոր ըստ նախնական տվյալ-

ների «Հնգամյակի 3-րդ վճռական տարվա» փոխառությանը բաժնեգրվել են 35 միլիոն աշխատավորներ:

«Հնգամյակի 4-րդ ավարտական տարվա» փոխառության բաժանորդների թիվը հասել է մոտավորապես 45 միլիոնի:

Այդ ևս մի ապացույց է մեր երկրի բանվոր դասակարգի և ամբողջ աշխատավորության անընդհատ նվիրվածության կուսակցության գլխավոր գծին—սոցիալիստական հարձակման գործում:

Մեր փոխառությունները համապետական նշանակություն ունենալուց բացի, տալիս են անմիջականորեն յուրաքանչյուր պարտատոմսատիրոջը խոշոր օգուտներ: Սակայն այդ օգուտները, շատ դեպքերում պարտատոմսատերերը չեն կարողանում օգտագործել, որովհետև նրանք վատ են իմանում փոխառության պայմանները:

Այս տեղեկագիրքը նպատակ ունի հեշտացնել պարտատոմսատեր աշխատավորների ծանոթանալու գործը՝ մեր բոլոր փոխառությունների հետ և այդպիսով բարձրացնել փոխառության գրագիտությունը, ապահովելով դրա հետ միասին շահումների և տոկոսների ժամանակին վճարումը միլիոնավոր աշխատավորներին:

## ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԽՍՀՄ պետական փոխառությունները մասսայական փոխառություններ են, որովհետև այդպիսիք տարածվում են ազգաբնակչության տասնյակ միլիոնավոր աշխատավորների մեջ:

Մասսայական փոխառություններին վերաբերվում են.—

1. «Հնգամյակը չորս տարում» փոխառության առաջին բաժինը (նույն թվում և «Ինդուստրացման 3-րդ փոխառությունը» որի հետ փոխանակվել են ինդուստրացման առաջին և 2-րդ փոխառությունների և գյուղատնտամրացման փոխառության պարտատոմսերը):

2. «Հնգամյակը չորս տարում» փոխառության 2-րդ բաժինը՝ «Հնգամյակի 3-րդ վճռական տարվա» փոխառությունը:

3. «Հնգամյակը չորս տարում» փոխառության 3-րդ բաժինը՝ «Հնգամյակի 4-րդ ավարտական տարվա» փոխառությունը:

## «ՀՆԳԱՄՅԱԿԸ ՉՈՐՍ ՏԱՐՈՒՄ» ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆԸ

Փոխառությունը բաց է թողնվել 1930 թվի հուլիս ամսին, 1,700 միլիոն ռուբլի գումարով 10 տարի ժամանակով:

Փոխառության այդ գումարից, 500 միլիոն ռուբլու պարտատոմսեր բաց են թողնված ինդուստրացման 1-ին և 2-րդ և գյուղատնտամրացման փոխառությունների պարտատոմսերով փոխանակելու և 1·200 միլիոն ռուբլու պարտատոմսեր-աշխատավորության մեջ տարածելու համար:

Փոխառությունն ունի երկու մասեր.—

Տոկոսաբեր-շահող և անտոկոսաբեր-շահող:

Փոխառության երկու մասերով էլ պետությունը վճարում է տարեկան 10%:

Տոկոսաբեր շահող մասով, այդ 10 տոկոսները

վճարվում են տոկոսների և շահումների ձևով, իսկ անտոկոսաբեր–շահող մասով բացառապես շահումների ձևով:

Փոխառության յուրաքանչյուր մասը բաժանվում է կարգերի, ունենալով յուրաքանչյուր կարգի մեջ 50 միլիոն ռուբլի: Յուրաքանչյուր կարգն իր հերթին ստորաբաժանվում է 100 հազար սերիայի, ունենալով յուրաքանչյուր սերիայում 10 պարտատոմս՝ 500 ռուբլի գումարով:

Բաժանումն ըստ կարգերի արված է բացառապես շահումների վիճակահանությունը հեշտացնելու, պարտատոմսերի տպագրության վրա լավագույն հսկողություն սահմանելու համար և այլն:

Փոխառության պարտատոմսերը բաց են թողնված 50 ռուբլի արժողությամբ: Ամբողջական պարտատոմսերն ունեն 25 ռ. 5 ռ. և 2–50 կոպեկանոց արժողությամբ մասեր: Պարտատոմսի յուրաքանչյուր մասը, տալիս է համապատասխան չափով եկամուտ. այսպես օրինակ, 25 ռուբլանոց պարտատոմսը տալիս է շահման և տոկոսի կեսը, 5 ռուբլանոց պարտատոմսը տալիս է շահման մեկ տասներորդական և տոկոսի մեկ տասներորդական մասը և այլն:

Տոկոսաբեր–շահող պարտատոմսերով, տոկոսները վճարվում են տարին մեկ անգամ – դեկտեմբերի 1-ին, (սկսած 1931 թ. դեկտեմբերից):

Շահումների վիճակահանությունները կատարվում են յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ, երկու մասերի համար էլ միաժամանակ: Սակայն շահելու հավանականություններն անտոկոսաբեր մասի



պարտատոմսերի վերաբերյալ ավելի քան շատ են, քան տոկոսաբերի, այսպես, եթե ըստ տոկոսաբեր մասի փոխառության շրջանառության ժամանակաընթացքում 12 հատ պարտատոմսերի վրա միջին հաշվով ընկնում է մեկ շահում, ապա, ըստ անտոկոսաբեր մասի, յուրաքանչյուր 5 պարտատոմսերի վրա ընկնում է մեկ շահում:

10 տարվա ընթացքում «Հնգամյակը չորս տարում» փոխառության վերաբերյալ պիտի կայանան 38 շահումների վիճակահանություններ—տարեկան չորս վիճակահանություններով (վերջին տարին 2 վիճակահանություն): Մինչև 1932 թվի հոկտեմբերի մեկը կայացել են 7 շահումների վիճակահանություններ: Յուրաքանչյուր վիճակահանությունում կան՝ 200,1000 և 5000 ռուբլիանոց շահումներ:

Սկսած 1936 թվից պետությունը յուրաքանչյուր տարի պիտի հանգցնի փոխառությունը մասերով, որի համար տեղի կունենան 5 հատուկ հանգցման վիճակահանություններ:

Ենթադրենք, թե հանգցման վիճակահանություններում դուրս եկան երկրորդ և հինգերորդ սերիաները. այդ նշանակում է, որ այն բոլոր պարտատոմսերը, որոնք ունեն այդ սերիաների համարները, հետագա շահումների վիճակահանություններին չեն մասնակցելու և տոկոսներ չեն բերելու այդ պարտատոմսերի վրա: Պարտատոմսերը հանգցվում են այն արժեքով, որպիսին նշանակված է պարտատոմսերի վրա:

Շահումների քանակը և նրանց գումարը ակնհայտնի կերպով երևում է հետևյալ աղյուսակից՝

# ԸՍՏ ԱՆՏՈԿՈՍԱԲԵՐ ՇԱՀՈՂ ՄԱՍԻ

| Յուրաքանչյուր շահման չափը | 1—24 վիճակահանություններից յուրաքանչյուրում խաղարկվում են | | 25—28 վիճակահանություններից յուրաքանչյուրում խաղարկվում են | | 29—32 վիճակահանություններից յուրաքանչյուրում խաղարկվում են | | 33—38 վիճակահանություններից յուրաքանչյուրում խաղարկվում են | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Յուրաքանչյուր կարգի վրա | | Յուրաքանչյուր կարգի վրա | | Յուրաքանչյուր կարգի վրա | | Յուրաքանչյուր կարգի վրա | |
| | Շահումների քանակը | Գումարը | Շահումների քանակը | Գումարը | Շահումների քանակը | Գումարը | Շահումների քանակը | Գումարը |
| 5000 | 2 | 10000 | 1 | 5000 | 1 | 5000 | 1 | 5000 |
| 1000 | 20 | 20000 | 15 | 15000 | 10 | 10000 | 5 | 5000 |
| 200 | 5778 | 1157600 | 4374 | 874800 | 3669 | 733800 | 2394 | 478800 |
| Ընդամենը | 5810 | 1187600 | 4390 | 894800 | 3680 | 748800 | 2400 | 488800 |



# ԸՍՏ ՏՈԿՈՍԱԲԵՐ ՇԱՀՈՂ ՄԱՍԻ

| Յուրաքանչյուր շահման չափը | 1—24 վիճակահանություններից յուրաքանչյուրում խաղարկվում են | | 25—28 վիճակահանություններից յուրաքանչյուրում խաղարկվում են | | 29—32 վիճակահանություններից յուրաքանչյուրում խաղարկվում են | | 33—38 վիճակահանություններից յուրաքանչյուրում խաղարկվում են | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Յուրաքանչյուր կարգի վրա | | Յուրաքանչյուր կարգի վրա | | Յուրաքանչյուր կարգի վրա | | Յուրաքանչյուր կարգի վրա | |
| | Շահումների քանակը | Գումարը | Շահումների քանակը | Գումարը | Շահումների քանակը | Գումարը | Շահումների քանակը | Գումարը |
| 5000 | 1 | 5000 | 1 | 5000 | 1 | 5000 | 1 | 5000 |
| 1000 | 20 | 20000 | 15 | 15000 | 10 | 10000 | 5 | 5000 |
| 200 | 2449 | 489800 | 2014 | 402800 | 1719 | 343800 | 1134 | 226800 |
| Ընդամենը | 2470 | 514800 | 2030 | 422800 | 1730 | 358800 | 1140 | 236800 |

Ինչպես տոկոսաբեր նույնպես և անտոկոսաբեր մասերի շահած պարտատոմսերի շահումների հետ միասին, վճարվում է նաև պարտատոմսի արժեքը. տոկոսաբեր — շահող, — պարտատոմսերով, շահումներից բացի վճարվում է նաև մինչև վիճակահանությունը քաղված տոկոսները: Շահած պարտատոմսերը հետագա վիճակահանություններին չեն մասնակցում:

## «ԻՆԴՈՒՍՏՐԱՑՄԱՆ 3-ՐԴ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ»

«Ինդուստրացման 3-րդ փոխառությունը» բաց է թողնվել նույն պայմաններով, ինչ վոր «Հնգամյակը չորս տարում» փոխառության առաջին բաժինը, որի համար էլ «Ինդուստրացման 3-րդ փոխառության» պարտատոմսերը համարվում են «Հնգամյակը չորս տարում» փոխառության մաս:

«Ինդուստրացման 3-րդ փոխառության» շահումների վիճակահանությունները կատարվում են «Հնգամյակը չորս տարում» փոխառության հետ միասին:

«Հնգամյակը չորս տարում» փոխառության բոլոր շահող պարտատոմսերի համարները, միաժամանակ շահում են նաև «Ինդուստրացման 3-րդ փոխառության» նկատմամբ:

Այսպես որինակ, յեթե 1-ին վիճակահանությունում «Հնգամյակը չորս տարում» փոխառության տոկոսաբեր մասի Նո. 05 սերիա Նո. 23652 պարտատոմսի վրա շահում է ընկնում, ապա «Ինդուստրացման 3-րդ փոխառության» տոկոսաբեր մասի նույն համարի և նույն սերիայի պարտատոմսը նույնպես շահում է:



Նույնը կատարվում է նաև անտոկոսաբեր մասի վերաբերյալ:

Բացի դրանից պետք հաշվի առնել նաև, վոր «Հնգամյակը չորս տարում» փոխառությունը բաց թողնելուց առաջ «Ինդուստրացման 3-րդ փոխառության» վերաբերյալ տեղի յեն ունեցել չորս շահումների վիճակահանություններ: Այսպիսով, «Հնգամյակը չորս տարում» փոխառության շահումների վիճակահանությունների ժամանակ կարող են շահումներ ընկնել նաև այն պարտատոմսերի վրա, վորոնք արդեն շահել են «Ինդուստրացման 3-րդ փոխառության» նախորդ շահումների վիճակահանություններում:

Այդպիսի դեպքերում, այդ համարները հաշված են շահած, միայն «Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսերի վերաբերյալ, «Ինդուստրացման 3-րդ փոխառության» վերաբերյալ, այդ համարների փոխարեն, վորպես կրկնվողներ, շահում են ուրիշ համարներ:

Որինակ-առաջին վիճակահանությունում «Հնգամյակը չորս տարում» փոխառության տոկոսաբեր մասի Նո. 000517 սերիայի պարտատոմսի վրա շահում

է ընկնում: Այդ համար սերիայի պարտատոմսը շահել է առաջիններում «Ինդուստրացման 3-րդ փոխառության» վիճակահանություններից վերևի մեկում: Դրա համար էլ, տվյալ սերիան շահում է միայն «Հնգամյակը չորս տարում» փոխառությամբ: «Ինդուստրացման 3-րդ փոխառության» վերաբերյալ շահումն ընկել է ուրիշ համարի վրա, այսինքն 035201 համարի սերիայի վրա. դրա համար էլ, վիճակահանության աղյուսակներում, 000517 համարի կողքին դրվում է «П» տառը: Այդ նշանակում է, որ այդ համարը խաղում է միայն «Հնգամյակը չորս տարում» փոխառության վերաբերյալ:

Իսկ 035201 համարի կողքին դրվում է «Т» տառը, որը նշանակում է, որ տվյալ համարը խաղում է միայն «Ինդուստրացման 3-րդ փոխառության» վերաբերյալ:

Այդ բոլորն ակնհայտնի կերպով ցույց են տրված վիճակահանությունների աղյուսակներում:

«Ինդուստրացման 3-րդ փոխառությունը» բաց է թողնվել 950 միլիոն ռուբլու, որից 300 միլիոն ռ. տոկոսաբեր և 650 միլիոն ռ. անտոկոսաբեր:

Այնքան, որքան «Ինդուստրացման 3-րդ փոխառությունը» համարվում է «Հնգամյակը չորս տարում» փոխառության մասը, ապա, «Հնգամյակը չորս տարում» փոխառության ընդհանուր գումարը կազմում է 2,650 միլիոն ռուբլի:



## «ՀՆԳԱՄՅԱԿԻ 3-ՐԴ ՎՃՌԱԿԱՆ ՏԱՐՎԱ» ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ

(«Հնգամյակը չորս տարում փոխառության 2-րդ բաժինը»).

Փոխառությունը բաց է թողնված 1931 թվին, 10 տարի ժամանակով, 2,200 միլիոն ռուբլի գումարով և բաղկացած է յերկու մասերից՝ անտոկոսաբեր–անպայման շահող և տոկոսաբեր:

Յերկու մասերով էլ եկամտությունը վճարվում է տարեկան 10%:

Ըստ անտոկոսաբեր–անպայման շահող մասի, այդ 10%-ը վճարվում են բացառապես շահումների ձևով, իսկ ըստ տոկոսաբեր մասի–բացառապես տոկոսներով:

Փոխառության պարտատոմսերը բաց են թողնվել յուրաքանչյուրը 50 ռուբլու արժողությամբ:

Ամբողջական պարտատոմսերը բաժանվում են 25, 10 և 5 ռուբլանոց մասերի: Պարտատոմսի յուրաքանչյուր մասը, տալիս է համապատասխան շահով յեկամուտ: Այսպես օրինակ, յեթե անտոկոսաբեր–անպայման շահող մասի պարտատոմսի վրա ընկնում է 100 ռուբլու շահում, ապա 25 ռուբլանոց պարտատոմս ունեցող պարտատոմսատերոջը տրվում է շահման գումարի կեսը, այսինքն՝ 50 ռուբլի: Ինչպես «Հնգամյակը չորս տարում» փոխառության, «3-րդ

վճռական տարվա» փոխառության յերկու մասերն էլ բաժանվում են կարգերի, յուրաքանչյուր կարգում ունենալով 50 միլիոն ռուբլի: Այդ փոխառության, ինչպես և մյուս փոխառությունների բաժանումը կարգերի, արված է բացառապես վիճակահանությունների կատարումը հեշտացնելու, սահմանելու լավագույն հսկողություն պարտատոմսերը, վիճակահանության աղյուսակները և այլն տպագրելու համար:

## ԱՆՏՈԿՈՍԱԲԵՐ—ԱՆՊԱՅՄԱՆ ՇԱՀՈՂ ՄԱՍ

Այդ մասի յուրաքանչյուր պարտատոմսը 10 տարվա ընթացքում, անպայման շահում է:

Շահումները սահմանված են—20, 25, 30, 35, 40, 50, 100, 200 և 500 ռուբլի:

Տաս տարվա ընթացքում տեղի կունենան ընդամենը 119 վիճակահանություններ: Սկսած 1932 թվի մայիսից, այդ փոխառությամբ յուրաքանչյուր ամսի 10-ին տեղի կունենան շահումների վիճակահանություններ:

Մինչև 1932 թվի հոկտեմբերի մեկը կատարվել են 8 վիճակահանություններ: Այդ մասի յուրաքանչյուր կարգի շահումների քանակն ու գումարը, ակնհայտնի կերպով յերևվում են հետևյալ աղյուսակներից:



| 1—48 վիճակահանություններից յուրաքանչյուրում խաղարկվում են | | |
|---|---|---|
| Շահումների չափը | Շահումների քանակը | Գումարը |
| 20 | 7030 | 140600 |
| 50 | 600 | 30000 |
| 100 | 100 | 10000 |
| 200 | 48 | 9600 |
| 500 | 22 | 11000 |
| Ընդամենը | 7800 | 201200 |

| 49—72 վիճակահանություններից յուրաքանչյուրում խաղարկվում են | | |
|---|---|---|
| Շահումների չափը | Շահումների քանակը | Գումարը |
| 25 | 7327 | 183175 |
| 50 | 700 | 35000 |
| 100 | 100 | 10000 |
| 200 | 49 | 9800 |
| 500 | 24 | 12000 |
| Ընդամենը | 8200 | 249975 |

| 78—96 վիճակահանություններից յուրաքանչյուրում խաղարկվում են | | |
|---|---|---|
| Շահումների չափը | Շահումների քանակը | Գումարը |
| 30 | 7623 | 228690 |
| 50 | 700 | 35000 |
| 100 | 100 | 10000 |
| 200 | 52 | 10400 |
| 500 | 25 | 12500 |
| Ընդամենը | 8500 | 296590 |

| 97—108 վիճակահանություններից յուրաքանչյուրում խաղարկվում են | | |
|---|---|---|
| Շահումների չափը | Շահումների քանակը | Գումարը |
| 35 | 7821 | 273735 |
| 50 | 800 | 40000 |
| 100 | 100 | 10000 |
| 200 | 53 | 10600 |
| 500 | 26 | 13000 |
| Ընդամենը | 8800 | 347335 |

8 347-53

| 109—113 վիճակահանություններից յուրաքանչյուրում խաղարկվում են | | |
|---|---|---|
| Շահումների չափը | Շահումների քանակը | Գումարը |
| 40 | 8217 | 328680 |
| 50 | 800 | 40000 |
| 100 | 100 | 10000 |
| 200 | 55 | 11000 |
| 500 | 28 | 14000 |
| Ընդամենը | 9200 | 403680 |

| 114—119 վիճակահանություններից յուրաքանչյուրում խաղարկվում են | | |
|---|---|---|
| Շահումների չափը | Շահումների քանակը | Գումարը |
| 40 | 11010 | 440400 |
| 50 | 1000 | 50000 |
| 100 | 100 | 10000 |
| 200 | 60 | 12000 |
| 500 | 30 | 15000 |
| Ընդամենը | 22200 | 527400 |

ՀԱՅԿ. ՍՍՀ ... ԳՐԱԴԱՐԱՆ

Վիճակահանությունները կատարվում են բոլոր կարգերով միաժամանակ։ Այսպես օրինակ, յեթե շահումն ընկնում է №․ 0358 սերիայի պարտատոմսի վրա, ապա այդ համարը շահում է բոլոր կարգերում։

Շահման հետ միասին, վճարվում է նաև պարտատոմսի արժեքը։ Օրինակ, յեթե պարտատոմսի վրա ընկնում է 100 ռուբլու շահում, ապա վճարվում է 100 ռուբլի շահման հետ միասին, նաև շահող պարտատոմսի 50 ռուբլի արժեքը։

Շահող պարտատոմսն հետագա վիճակահանություններին չի մասնակցում։

Անտոկոսաբեր-անպայման շահող մասի յուրաքանչյուր կարգում կան 50 միլլիոն ռուբլու պարտատոմսեր, վորոնք բաժանվում են 10 հազար սերիաների։ Յուրաքանչյուր սերիայում կան 100 հատ պարտատոմսեր, յուրաքանչյուրը 50 ռուբլու արժողությամբ։

## ՏՈԿՈՍԱԲԵՐ ՄԱՍ

Այդ մասով, պետությունը կուպոններով վճարում է տոկոսներ տարեկան 10%-ի չափով։

Տոկոսները վճարվում են տարեկան մեկ անգամ, սկսած 1932 թվի դեկտեմբերի մեկից։

1933 թվի դեկտեմբերի մեկից սկսվում է այդ մասի պարտատոմսերի հանգցնումը՝ հատուկ հանգ-



ցման վիճակահանությունների միջոցով։ Այդ վիճակահանություններում նշվում են, թե պետությունը, վոր սերիաների, վոր պարտատոմսերն է հանգցնում։ Հանգցման վիճակահանություններում դուրս յեկած պարտատոմսերով տոկոսների վճարումը դադարեցվում է սկսած այն թվի դեկտեմբերի մեկից, վորում կատարվել է վիճակահանությունը։ Ութ տարվա ընթացքում, սկսած 1933 թվից տեղի կունենա ամեն տարի մեկական անգամ հանգցման վիճակահանություններ և յուրաքանչյուր վիճակահանությունում պիտի հանգցվեն փոխառության այդ մասի 1/10-ական մասը, պարտատոմսակի չհանգցված մասը։ (2/10 մասը) կհանգցվի հետ գնման ճանապարհով, սկսած 1941 թվի դեկտեմբերի մեկից։

Տոկոսաբեր մասը բաժանվում է կարգերի, յուրաքանչյուր կարգում 50 միլլիոն ռուբլի։ Յուրաքանչյուր կարգը կազմված է 100 հազար սերիայից, յուրաքանչյուրում 10 հատ հիսուն ռուբլանոց պարտատոմսեր։

## «ՀՆԳԱՄՅԱԿԻ ՉՈՐՐՈՐԴ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՏԱՐՎԱ» ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ

(«Հնգամյակը չորս տարում» փոխառության յերկրորդ բաժինը)

«Նպաստելու համար 1932 թվում առաջին հնգամյակի կատարմանը, յերկրորդ հնգամյակի պլանների հոյակապ կառուցմանը ձեռնամուխ լինելու,

ընդգրկող սոցիալիստական հասարակակարգ կառուցելու համար և ընդառաջ գնալով առաջավոր գործարանների, խոշոր շինարարությունների, բազմաթիվ բանվորների և առաջավոր կոլտնտեսականների պահանջներին...», կառավարության կողմից բաց թողնվեց 1932 թվին «Հնգամյակի չորրորդ ավարտական տարվա» փոխառությունը 3,200 միլիոն ռուբլի գումարով, 10 տարի ժամանակով՝ 1932 թվի դեկտեմբերի մեկից մինչև 1942 թվի դեկտեմբերի մեկը:

Այդ փոխառությունն, ինչպես և նախորդ մասսայական փոխառություններն, ունի երկու մասեր՝ անպայման շահող (առանց տոկոսների) և տոկոսաբեր (առանց շահումների): Փոխառության այսպիսի կառուցվածքը համապատասխանում է աշխատավորական լայն մասսաների ցանկություններին:

Անպայման շահող մասը պահպանվել է այդ նոր փոխառության մեջ նրա համար, որ, ինչպես ցույց տվին «3-րդ վճռական տարվա» փոխառության իրացման արդյունքները, փոխառության անպայման շահող ձևն օգտվում է աշխատավորական ամենալայն խավերի մեջ· հսկայական ժողովրդականությամբ:

Փոխառության տոկոսաբեր մասը բավարարում է այն աշխատավորների ցանկությանը, վորոնք հետաքրքրվում են փոխառության մաքուր տոկոսային ձևով:

Այս փոխառությամբ պետությունը վճարում է



տարեկան 10 $^0/_0$, այսինքն այնքան, ինչքան նախորդ փոխառությամբ:

Անպայման շահող մասով, այդ տոկոսները վճարվում են բացառապես - շահումների ձևով, իսկ տոկոսաբեր մասով – միայն տոկոսների ձևով – կուպոններով:

Փոխառության պարտատոմսեր բաց են թողնվում յուրաքանչյուրը 100 ռուբլու արժողությամբ: Անպայման շահող մասի ամբողջական պարտատոմսերն ունեն մասեր 50, 25 և 10 ռուբլու արժողությամբ, իսկ տոկոսաբեր մասի պարտատոմսերը—25 և 10 ռուբլու արժողությամբ:

Յուրաքանչյուր 100 ռուբլանոց պարտատոմս, ունի առանձին համար: Մեկ պարտատոմսի բոլոր մասերն ունեն միևնույն համարը:

Պարտատոմսի յուրաքանչյուր մասն իրավունք է տալիս ստանալու ամբողջական պարտատոմսի յեկամուտի համապատասխան մասը:

Այսպես, յեթե անպայման շահող պարտատոմսի վրա ընկնում է 1000 ռուբլու շահում, ապա 25 ռուբլու արժողությամբ պարտատոմսով վճարվում է 250 ռուբլու շահում:

Տոկոսաբեր մասի 100 ռուբլանոց պարտատոմսով վճարվում է տարեկան 10 ռուբլի տոկոս, 25 ռուբլանոց պարտատոմսով կվճարվի 2 ռ. 50 կոպ. 10 ռուբ. պարտատոմսով՝ 1 ռուբլի:

Փոխառության յուրաքանչյուր մասը բաժանվում է կարգերի, յուրաքանչյուրում 100 միլիոն ռուբլի:

Անպայման շահող մասի յուրաքանչյուր կարգում կան 20 հազար սերիաներ յուրաքանչյուրում 50 հատ 100 ռուբլանոց պարտատոմսեր՝ 5000 ռուբլի գումարով:

Տոկոսաբեր մասի յուրաքանչյուր կարգում կան 100 հազար սերիաներ, յուրաքանչյուրում 10 հատ 100 ռուբլանոց պարտատոմսեր — գումարով 1000 ռուբլի:

## ԱՆՊԱՅՄԱՆ ՇԱՀՈՂ ՄԱՍ

Այդ մասի յուրաքանչյուր պարտատոմս, փոխառության շրջանառության 10 տարվա ժամանակընթացքում անպայման շահում է: Չշահող պարտատոմսեր չկան:

Շահումները սահմանված են 100, 200, 500, 1000 և 3000 ռուբլի—100 ռուբլանոց պարտատոմսի վրա:

Տաս տարվա ընթացքում տեղի կունենա 40 շահումների վիճակահանություններ, տարեկան չորս վիճակահանությամբ:

Առաջին վիճակահանությունը տեղի կունենա 1933 թվի հունվար ամսում, յերկրորդը մարտ ամսում և այլն:

Անպայման շահող մասի յուրաքանչյուր կարգի շահումների քանակն ու գումարը — յերևում է հետևյալ աղյուսակից



| Շահումների չափը | 1-ին տարում | | 2-րդ տարում | | 3-րդ տարում | |
|---|---|---|---|---|---|---|
| | 1—4 վիճակահանություններից յուրաքանչյուրում խաղարկվում են | | 5—8 վիճակահանություններից յուրաքանչյուրում խաղարկվում են | | 9—12 վիճակահանություններից յուրաքանչյուրում խաղարկվում են | |
| | Շահումների քանակը | Գումարը | Շահումների քանակը | Գումարը | Շահումների քանակը | Գումարը |
| 3000 | 2 | 6000 | 2 | 6000 | 2 | 6000 |
| 1000 | 10 | 10000 | 10 | 10000 | 10 | 10000 |
| 500 | 20 | 10000 | 20 | 10000 | 20 | 10000 |
| 200 | 500 | 100000 | 550 | 110000 | 600 | 120000 |
| 100 | 11468 | 1146800 | 11918 | 1191800 | 12368 | 1236800 |
| Ընդամենը | 12000 | 1272800 | 12500 | 1327800 | 13000 | 1382800 |

| Շահման չափը | 4-րդ տարում | | 5-րդ տարում | | 6-րդ տարում | |
|---|---|---|---|---|---|---|
| | 13—16 վիճակահանություններից յուրաքանչյուրում խաղարկվում են | | 17—20 վիճակահանություններից յուրաքանչյուրում խաղարկվում են | | 21—24 վիճակահանություններից յուրաքանչյուրում խաղարկվում են | |
| | Շահումների քանակը | Գումարը | Շահումների քանակը | Գումարը | Շահումների քանակը | Գումարը |
| 3000 | 2 | 6000 | 2 | 6000 | 3 | 9000 |
| 1000 | 10 | 10000 | 10 | 10000 | 15 | 15000 |
| 500 | 20 | 10000 | 20 | 10000 | 30 | 15000 |
| 200 | 650 | 130000 | 700 | 140000 | 800 | 160000 |
| 100 | 12818 | 1281800 | 13768 | 1376800 | 15152 | 1515200 |
| Ընդամենը | 13500 | 1437800 | 14500 | 1542800 | 16000 | 1714200 |



| Շահման չափը | 7-րդ տարում | | 8-րդ տարում | | 9-րդ տարում | |
|---|---|---|---|---|---|---|
| | 25—28 վիճակահանություններից յուրաքանչյուրում խաղարկվում են | | 29—32 վիճակահանություններից յուրաքանչյուրում խաղարկվում են | | 33—36 վիճակահանություններից յուրաքանչյուրում խաղարկվում են | |
| | Շահումների քանակը | Գումարը | Շահումների քանակը | Գումարը | Շահումների քանակը | Գումարը |
| 3000 | 3 | 9000 | 3 | 9000 | 3 | 9000 |
| 1000 | 15 | 15000 | 15 | 15000 | 15 | 15000 |
| 500 | 30 | 15000 | 30 | 15000 | 30 | 15000 |
| 200 | 900 | 180000 | 1000 | 200000 | 1100 | 220000 |
| 100 | 23052 | 2305200 | 36452 | 3645200 | 50852 | 5085200 |
| Ընդամենը | 24000 | 2524200 | 37500 | 3884200 | 52000 | 5344200 |

| Շահումների չափը | 10-րդ տարում<br>37—40 վիճակահանությունների յուրաքանչյուրում խաղարկվում են<br>Շահումների քանակը | <br><br>Գումարը |
|---|---|---|
| 3000 | 3 | 9000 |
| 1000 | 15 | 15000 |
| 500 | 30 | 15000 |
| 200 | 1200 | 240000 |
| 100 | 53752 | 5375200 |
| Ընդամենը | 55000 | 5654200 |

«Հնգամյակի չորրորդ ավարտական տարվա» փոխառության անպայման շահող մասը տարբերվում է «Հնգամյակի 3-րդ վճռական տարվա» փոխառության համապատասխան մասից հետևյալով –

1. «3-րդ վճռական տարվա» փոխառության անպայման շահող մասի 50 ռուբլանոց պարտատոմսի վրա ընկնում է 200-ից մինչև 500 ռուբլու շահում, կամ, յեթե այդ փոխառության պարտատոմսի արժե-



քը համապատասխանեցնենք «4-րդ ավարտական տարվա» փոխառության ամբողջական (100 ռուբլանոց) պարտատոմսի արժեքին, կրկնապատկենք այդպիսին, ապա շահումները նույնպես համապատասխան կերպով կկրկնապատկվեն և կտան 40-ից 100 ռուբլի:

«4-րդ ավարտական տարվա» փոխառության անպայման շահող մասի շահումները սահմանված են 100-ից մինչև 3000 ռուբլի, այսինքն ամենափոքր շահումը գերազանցում է $2\frac{1}{2}$ անգամ, իսկ ամենամեծը՝ 3 անգամ «3-րդ վճռական տարվա» փոխառության համապատասխան շահումներից:

2. Յերկրորդ, եյական տարբերությունն այդ փոխառության «3-րդ վճռական տարվա» փոխառությունից և ընդհանրապես նախորդ բոլոր փոխառություններից, կայանում է նրանում, վոր «4-րդ ավարտական տարվա» փոխառության շահած պարտատոմսի շահած գումարը տրվում է անմիջապես, իսկ պարտատոմսի արժեքը տրվում է 3 տարուց հետո, հաշվելով այն տարվա վերջից, վորում պարտատոմսը շահել է:

Որինակ, յեթե «3-րդ վճռական տարվա» փոխառության 50 ռուբլանոց ամբողջական պարտատոմսի վրա 100 ռուբլու շահում է ընկնում, շահողին մեկ անգամից տրվում է 150 ռուբլի (100 ռուբլի շահում և 50 ռուբլի պարտատոմսի արժեքը): Յեթե «Հնգամյակի 4-րդ ավարտական տարվա» փոխառության 100

ռուբլանոց ամբողջական պարտատոմսի վրա ընկնում է 100 ռուբլու շահում, ապա շահողն ստանում է մեկ անգամից 100 ռուբլի, իսկ պարտատոմսի արժեքը՝ 100 ռուբլին, շահողն ստանում է 3 տարուց հետո, սկսած այն տարվանից, վորում կատարվել է շահումը: Շահած պարտատոմսերը հետագա վիճակահանություններին չեն մասնակցում: Փոխառության շրջանառության առաջին տարում շահած պարտատոմսերի արժեքը (առաջին չորս վիճակահանություններում) վճարվում է 1936 թվի դեկտեմբերի մեկից.

Փոխառության շրջանառության 2-րդ տարում շահածներինը (5–8 վիճակահանություններում) 1937 թվի դեկտեմբերի 1-ից և այլն:

Այսպիսով շահումների գումարների բարձրացումը գնում է ի հաշիվ նրա, վոր աշխատավորները տալիս են իրենց խնայումներն ավելի յերկար ժամանակով: Վարկի ժամկետի յերկարացնելը նպատակահարմար է և անհրաժեշտ, վորովհետև փոխառության միջոցով հավաքված միջոցները գնում են նոր գործարանների, ֆաբրիկաների, յերկաթուղային ճանապարհների, շախտերի, խորհտնտեսությունների և այլն կառուցումների կապիտալ շինարարությունների համար, վորոնք գործադրվում են վոչ թե մեկ անգամից, այլ միայն վորոշ ժամանակից հետո: Հետև-



վորպես փոխառության վարկի ավելացումը համապատասխանում է պետության և պարտատոմսերի շահերին:

## ՏՈԿՈՍԱԲԵՐ ՄԱՍ

Ինչպես նշվեց վերևում, տոկոսաբեր մասի պարտատոմսերով ամբողջ յեկամուտը՝ տարեկան $10^0/_0$-ի չափով, վճարվում է տոկոսների ձևով – կուպոններով:

Տոկոսները վճարվում են տարեկան մեկ անգամ, սկսած 1933 թվի դեկտեմբերի մեկից. տոկոսաբեր մասի պարտատոմսերի հանգցնումն սկսվում է 1935 թ. դեկտեմբերի 1-ից: Հանգցման վիճակահանություններն տեղի կունենան տարեկան մեկ անգամ յոթ տարվա ընթացքում, այսինքն մինչև 1942 թվի դեկտեմբերի 1-ը: Յուրաքանչյուր վիճակահանությունում հանգցվելու յեն այդ մասի պարտատոմսերի 1/10 մասը: Պարտատոմսերի հանգցված մասը (3/10) կհանգցվի հետ գնման կարգով 1942 թվի դեկտեմբերի 1-ից:

## «ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆԸ»

«Յերկրորդ հնգամյակի փոխառությունը» բաց է թողնվում 3 միլիարդ ռուբլի գումարով, 10 տարի ժամանակով սկսած 1933 թվի հոկտեմբերի մեկից, մինչև 1943 թվի հոկտեմբերի 1-ը:

Փոխառությունն ունի յերկու մաս՝ տոկոսաբեր յեվ անտոկոսաբեր - անպայման շահող:

Պարտատոմսերը բաց են թողնվում 100 ռուբլու արժողությամբ և ունեն բաժանել՝ 50, 25, 10 և 5 ռուբլանոց մասեր:

5 ռուբլանոց պարտատոմսերի համար բաժնեցրություն չի ընդունվում: Այդպիսիք բաց են թողնված միայն կոլեկտիվից հեռացող բաժանորդի հետ հաշվարկումներ կատարելու համար:

Փոխառության տոկոսաբեր մասի պարտատոմսատերերն ստանում են կայուն յեկամուտ տարեկան 10% կուպոններով, տոկոսաբեր մասի պարտատոմսերի հանգցնումն սկսվում է փոխառության շրջանառության 6-րդ տարուց հետո, այսինքն 1939 թվի հոկտեմբերի 1-ից:

Անտոկոսաբեր մասի պարտատոմսերով, ամբողջ յեկամուտը վճարվում է բացառապես շահումների ձևով: Փոխառության ամբողջ ժամանակաընթացքում, տեղի կունենա 40 շահումների վիճակահանություններ տարեկան 4 վիճակահանությունների հաշվով:

Շահումների չափը սահմանված է 3000, 1000, 500, 250, 200 և 150 ռուբլի, ներառյալ հանգցվող պարտատոմսի արժեքը:

200 և 150 ռուբլու շահումները տեղի յեն ունենալու սկսած փոխառության շրջանառության 8-րդ տարուց:

Վիճակահանություններում խաղարկվելու յեն→



| Շահումների մեծությունը ռուբլիներով (պարտատոմսի ամբողջ արժեքով) | 1—8 տիրաժներում յուրաքանչյուրում խաղարկվում է | | 9—31, 33—35, 37—39 տիրաժներից յուրաքանչյուրում խաղարկվում է | | 32-րդ, 36-րդ և 40-րդ տիրաժներից յուրաքանչյուրում խաղարկվում է | | Բոլոր տիրաժներում յուրաքանչյուր կարգի համար | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Շահումների քանակը | Շահումների գումարը ռուբլիներով | Շահումների քանակը | Շահումների գումարը ռուբլիներով | Շահումների քանակը | Շահումների գումարը ռուբլիներով | Շահումների քանակը | Շահումների գումարը ռուբլիներով |
| 3000 | 3 | 9000 | 2 | 6000 | 2 | 6000 | 88 | 264000 |
| 1000 | 40 | 40000 | 30 | 30000 | 30 | 30000 | 1280 | 1280000 |
| 500 | 100 | 50000 | 75 | 37500 | 75 | 37500 | 3200 | 1600000 |
| 250 | 7657 | 1914250 | 6693 | 1673250 | 6693 | 1673250 | 275432 | 68858000 |
| 200 | — | — | — | — | 120000 | 24000000 | 360000 | 72000000 |
| 150 | — | — | — | — | 120000 | 18000000 | 360000 | 54000000 |
| Ընդամենը | 7800 | 2013250 | 6800 | 1746750 | 246800 | 43746750 | 1000000 | 198002000 |

Փոխառության իրացված գումարներից կատարվում են մասհանումներ: Հանրապետական բյուջեին՝ բանվոր - ծառայողների մուծումներից 15%

Տեղական բյուջեին՝ բանվոր - ծառայողներից 10%, այլերից 25%:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինդուստրացման 1-ին և 2-րդ փոխառությունների և գյուղատնտեսական ամրացման փոխառության փոխանակումը.—

Այդ փոխանակումների պարտատոմսերը պետք է 1930 թվին փոխանակվեյին «Հնգամյակը չորս տարում» փոխառության առաջին բաժնի պարտատոմսերով: Կառավարության վորոշման մեջ ասված է, վոր մինչև 1931 թվի հունվարի 1-ը չփոխանակված պարտատոմսերը չեն մասնակցում շահումների վիճակահանություններին և այդ պարտատոմսերով տոկոսներ չեն վճարվում: Սակայն դա դեռ չի նշանակում, վոր այդ պարտատոմսերը հետագայում անպետք են: Նրանց կարելի յե փոխանակել մինչև 1934 թվի հունվարի 1-ը: Այդ ժամկետից հետո, ինդուստրացման 1-ին և 2-րդ փոխառությունների և գյուղտնտամրացման փոխառության պարտատոմսերն այլևս վոչ մի արժեք չեն ներկայացնում:

Պարտատոմսերի փոխանակումը կատարում են բոլոր խնայդրամարկղները:

Պարտատոմսատերն ըստ իր ցանկության կարող է փոխանակել իր պարտատոմսերը «Հնգամյակը չորս



տարում» փոխառության այն պարտատոմսերով, վորոնց ինքը ցանկանում է, պարտատոմսերի վրա գըրված արժեքով:

Օրինակ.— Ինդուստրացման 2-րդ փոխառության տոկոսաբեր մասի 50 ռուբլանոց ամբողջական պարտատոմսը, կարող է փոխանակվել «Հնգամյակը չորս տարում», փոխառության տոկոսաբեր և անտոկոսաբեր մասերի պարտատոմսերով—այսինքն պարտատոմսատերը կարող է ստանալ «Հնգամյակը չորս տարում» փոխառության ամբողջական 50 ռուբլանոց պարտատոմս կամ 25 ռուբլիանոց տոկոսաբեր մասի և 25 ռուբլիանոց անտոկոսաբեր մասի պարտատոմս և այլն:

Այն պարտատոմսերը, վորոնք տրվում են պարտատոմսատերերին ինդուստրացման 1-ին և 2-րդ փոխառությունների փոխարեն, ունեն լրացուցիչ կտրոններ: Այդ կտրոններով պարտատոմսատերերը ստանում են այդ փոխառությունների յեվ «Հնգամյակը չորս տարում» փոխառության յեկամուտների տարբերությունը:

Այսպես, ըստ ինդուստրացման 1-ին փոխառության, պետությունը վճարում եր շահումների և տոկոսների ձևով տարեկան մոտավորապես 12%, իսկ «Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսերով, պետությունը վճարում է տարեկան 10 տոկոս: «Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսերին կից լրացուցիչ կտրոնները, ծածկում են ինդուստրացման 1-ին և 2-րդ փոխառությունների և «Հնգամյակը չորս տարում» փոխառության յեկամուտների տարբերությունը:

Լրացուցիչ կտրոններով յեկամուտների տարբե-

լուծությունը սնանությունը վճարում է ժամանակին, կտրոնի վրա նշված այն պայմանով, եթե այդ կտրոնը պարտատոմսից չի անջատված։ Եթե այդպիսի փոխանակված պարտատոմսի վրա շահում է ընկնում, ապա շահման գումարի հետ միասին, վճարվում է լրացուցիչ կտրոնի վրա նշված ոչ թե ամբողջ գումարը, այլ այն մասը, որը կազմում է փոխանակված պարտատոմսերի և «Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսերի եկամուտի տարբերությունը, բաշխված մինչև շահման մոմենտը։

Շահումների վիճակահանություններում, ճիշտ կերպով ցույց է տրվում, թե ինչքան պետք է վճարել լրացուցիչ կտրոններով։

## ՊԱ Տ'ՏՈՄՍԵՐԻ ԳՆՈՒՄՆ ՈՒ ՎԱՃԱՌՔԸ

«Հնգամյակը չորս տարում» փոխառության բոլոր բաժինների, նույն թվում և ինդուստրացման 3-րդ փոխառության պարտատոմսերը, գնվում են խնայդրամարկղների կողմից, պայմանով, եթե այդպիսիք վաճառելու համար, պարտատոմսատերն ունի Պետվարկին և խնայգործին օժանդակող հանձնաժողովից թույլատվություն։

Պարտատոմսերը վաճառելու համար թույլատվությունները տրվում են՝

ա) Բանվորներին և ծառայողներին, հիմնարկություններին կից օժանդակ հանձնաժողովների կողմից։

բ) Գյուղական ազգաբնակչությանը — պարտատոմսատիրոջ բնակավայրի գյուղխորհրդին կից օժանդակող հանձնաժողովի կողմից։



գ) Տնայնագործներին և քաղաքի այլ բնակչությանը՝ պարտատոմսերի բնակավայրի քաղխորհուրդներին և շրջգործկոմներին կից օժանդակող հանձնաժողովների կողմից։

Օժանդակող հանձնաժողովները, պարտատոմսերը վաճառելու և գրավ դնելու համար թույլատվությունները տալիս են բացառիկ պայմաններում, երբ պարտատոմսատերերն ունեն սուր կարիք, պարտատոմսերը վաճառելու կամ գրավ դնելու մեջ։

«Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսերը կարելի յէ դնել ցանկացած խնայողական դրամարկղում։

## ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՍՏԱՑՈՒՄՆ ԱՄՐԱՑՄԱՆ ԿՏՐՈՆՆԵՐԻ ՓՈԽԱՐԵՆ

Ամրացման կտրոնները տրվում են բաժանորդներին, փոխառության բաժնեգրության վայրում։

Բաժնեգրության ժամկետը լրանալուց, պարտատոմսերի արժեքը լրիվ վճարելուց հետո, բաժանորդըն ստանում է ամրացման կտրոնների փոխարեն վճարված պարտատոմսերը այն հիմնարկ — ձեռնարկության ադմինիստրացիայից, որտեղ ինքն աշխատում է։

Եթե բաժանորդը ժամանակին չի ստանում իր պարտատոմսերը ադմինիստրացիայից, ապա, վերջինս պետք այդպիսիք հանձնի խնայդրամարկղին՝ ի պահ։ Դրանից հետո, բաժանորդը պետք հետևի, ստանալու պարտատոմսերն արդեն խնայդրամարկղից։

Բաժանորդը պետք ներկայացնի ադմինիստրացիայից խնայդրամարկղին տեղեկանք այն մասին,

վոր ինքը վճարել է պարտատոմսերի արժեքը։ Այդ տեղեկանքը ներկայացվում է խնայդրամարկղին–ամրացման կտրոնների հետ միասին, վորոնց փոխարեն, խնայդրամարկղը տալիս է պարտատոմսերը։ Ամրացման կտրոնները կորցնելու դեպքում, բաժանորդը չի զրկվում պարտատոմսերն ստանալու իրավունքից․ Խնայդրամարկղը տալիս է նրան պարտատոմսերը, յեթե նա ներկայացնում է ադմինիստրացիայից պարտատոմսերի արժեքը վճարելու մասին տեղեկանքը։

Պարտատոմսերն ստանալու համար, նույն այդ կարգը պահպանվում է խնայդրամարկղներում նաև այն դեպքի համար, յերբ բաժանորդները գտնվում են ուրիշ բնակավայրում և վոչ թե այնտեղ ուր կատարվել է բաժնեգրությունը։ Բաժանորդը կարող է փոստով տեղեկանք պահանջել բաժնեգրության բնակավայրի ադմինիստրացիայից և փոստով էլ պահանջել խնայդրամարկղից պարտատոմսերը։

## ՇԱՀՈՒՄՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄ ԱՄՐԱՑՄԱՆ ԿՏՐՈՆՆԵՐՈՎ

Շահումը, վորն ընկել է ամրացման կտրոնում նշված պարտատոմսի համարի վրա, վճարվում է կոլեկտիվի, ադմինիստրացիայի միջոցով։ Բաժանորդը կարող է ինքը նույնպես ստանալ շահումը խնայդրամարկղից, ուր ձևակերպված է բաժնեգրությունը։ Դրա համար բաժանորդը պիտի վերցնի ադմինիստրացիայից տեղեկանք՝ հերթական մուծումները վճարելու մասին և ներկայացնի այդպիսին ամրացման կտրոնի հետ միասին այն խնայդրամարկղին, ուր ձևակերպված է բաժնեգրությունը։ Խնայդրամարկղը վճարում է շահումը և ամրացման կտրոնը վերադարձնում է բաժանորդին։ Այդ կտրոնի փոխարեն, փոխառության հաշվարկումները վերջանալուց հետո, բաժանորդը ստանում է նրա կողմից վճարված պարտատոմսը։ Ամրացման կտրոնի վերադարձումը և հետո ամրացման կտրոնի փոխանակումը պարտատոմսով, կատարվում է միայն, «Հնգամյակի 4-րդ ավարտական տարվա» փոխառության վերաբերյալ։



«Հնգամյակը չորս տարում» փոխառության մյուս բաժինների պարտատոմսերի շահումն ու արժեքը վճարվել է, ամրացման կտրոնները խնայդրամարկղը հանձնելու դեպքում։

## ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՈՒՄԸ ԿՈԼԵԿՏԻՎԻՑ ՀԵՌԱՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Բաժնեգրության բոլոր վճարումները վերջացնելուց առաջ կոլեկտիվից հեռանալու դեպքում, հաշվարկումները կարելի յե կատարել յերկու կերպ, կամ վճարել բաժնեգրության ամբողջ պարտքը և ստանալ առձեռն վճարված պարտատոմսերը, կամ սահմանափակվել կատարած հերթական մուծումներով։ Այդ վերջին դեպքում բաժանորդն ստանում է մուծած գումարի չափով պարտատոմսեր։

## ԱՅԼ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բացի թվարկված փոխառություններից, ազգաբնակչության մեջ տարածված են և ուրիշ փոխառություններ։

### 1927 թվի 10%-ային շահող փոխառություն

Փոխառությունը բաց է թողնվել 100 միլիոն ռուբլի գումարով, ութ տարի ժամանակով—մինչև 1935 թվի մայիսի մեկը։

Պետությունն այդ փոխառությամբ վճարում է մոտավորապես 13%, վորից տարեկան 10% կուպոններով և մոտավորապես 3% շահումների միջոցով։ Պարտատոմսերը բաց են թողնվել 25 ռուբլու արժողությամբ։ Ամբողջական պարտատոմսերն ունեն մասեր՝ 5 ռուբլու արժողությամբ։

Տոկոսները – կուպոններով վճարվում է տարեկան 2 անգամ, մարտի 1-ից 1 ռ. 25 կոպեկ. 25 ռուբլանոց ամբողջական պարտատոմսով յեվ 25 կոպեկ՝ 5 ռուբլանոց պարտատոմսով (յուրաքանչյուր կուպոնով)։ Բացի դրանից տարեկան չորս անգամ (հունվարի 20-ին, ապրիլի 20-ին, հուլիսի 20-ին և հոկտեմբերի 20-ին) կատարվում են շահումների վիճակահանություններ։ Մինչև 1932 թվի հոկտեմբերի 1-ը տեղի յեն ունեցել 22 վիճակահանություններ։

Այդ փոխառությամբ շահումները սահմանված են 100, 250, 1000, 5000, 10000, 25000 և 50000 ռուբլու։

Շահումների հետ միասին տրվում է նաև պարտատոմսի արժեքը և այնքան տոկոսներ, ինչքան աճել են մինչև վիճակահանության մոմենտը։ Շահող պարտատոմսը հետևյալ վիճակահանություններին չի մասնակցում։

1931 թվից, պետությունը ձեռնամուխ է յեղել հանգցնելու այդ փոխառությունը, վորի համար կատարվում են հանգցման վիճակահանություններ։



Հանգցման առաջին վիճակահանությունը տեղի յե ունեցել 1931 թվին, յերկրորդը՝ 1932 թվին։

Այդ վիճակահանություններում հանգցվել են հետևյալ 8 սերիաները՝ 2, 3, 9, 10, 11, 12, 13 և 15։

Այդ սերիաների բոլոր պարտատոմսերը հանգցվում են։

Հետագայում պետությունը այդ սերիաների պարտատոմսերով վոչ մի յեկամուտ՝ տոկոսների կամ շահումների ձևով չի վճարելու։

Հանգցման հետևյալ վիճակահանությունները տեղի յեն ունեցել 1933 և 1934 թ.թ.։ Յուրաքանչյուր վիճակահանությունում հանգցվել են 4 սերիաներ։ Մնացած սերիաների պարտատոմսերը հետ կգնվեն 1935 թվի մարտի 1-ից։

### «1929 թվի անտոկոսաբեր – շահող փոխառություն»

Փոխառությունը բաց է թողնվել 50 միլիոն ռուբլի գումարով, 10 տարի ժամանակով, 100 ռուբլու արժողությամբ պարտատոմսերով։ Ամբողջական պարտատոմսերն ունեն մասեր՝ 50 ռուբլու արժողությամբ։ Այդ փոխառությամբ տեղի յեն ունենում տարեկան 4 վիճակահանություններ – մարտի 15-ին, հունիսի 15-ին, սեպտեմբերի 15-ին և դեկտեմբերի 15-ին։

Մինչև 1932 թվի հոկտեմբերի 1-ը, տեղի յեն ունեցել 14 վիճակահանություններ։ Յուրաքանչյուր վիճակահանությունում խաղարկվում են 5600 շահումներ՝ 1.053.100 ռուբլի գումարով, նույն թվում՝

1-ական շահումներ 100 և 50 հազարական ռուբլու
2 » » շահումներ 25 հազարական ռուբլու
5 » » շահումներ 10 հազարական ռուբլու
10 » » շահումներ 5 հազարական ռուբլու
50 » » շահումներ 1 հազարական ռուբլու
1000 » » շահումներ 250-ական ռուբլու և
4531 » » շահումներ 100-ական ռուբլու։

Շահումների հետ միասին տրվում է նաև պարտատոմսի արժեքը։ Այսպես օրինակ, յեթե 100 ռուբլու արժողությամբ պարտատոմսի վրա ընկնում է 250 ռուբլի շահում, ապա տրվում է ընդամենը 350 ռուբլի։

«1930 թվի տոկոսաբեր-շահող փոխառություն»

Փոխառությունը բաց է թողնվել 50 միլիոն ռուբլի գումարով, 10 տարի ժամանակով, 50 ռուբլու արժողությամբ պարտատոմսերով։ Ամբողջական պարտատոմսն ունի մասեր՝ 10 ռուբլու արժողությամբ։ Այդ փոխառությամբ տեղի յեն ունենում տարեկան 4 շահումների վիճակահանություններ – հունվարի 20-ին, ապրիլի 20-ին, հուլիսի 20-ին և հոկտեմբերի 20-ին։ Յուրաքանչյուր վիճակահանությունում խաղարկվում են 25 շահումներ,՝ 125 հազար ռուբլի գումարով, վորից՝

1 շահում 50 հազար ռուբլու
1 շահում 25 հազար ռուբլու
3 շահում 10 հազարական ռուբլու
20 շահում 1 հազարական ռուբլու

Ընդամենը պետք է կատարվի 40 շահումների վիճակահանություններ։ Մինչև 1932 թիվը, տեղի յեն ունեցել 10 շահումների վիճակահանություններ։

Այդ փոխառությամբ, շահումներից բացի, պետությունը վճարում է տարեկան 9%։ Շահման դեպքում վճարվում է շահումից բացի նաև պարտատոմսի արժեքը և տոկոսներ այնպիսի գումարով, վորպիսին աճել է մինչև վիճակահանության մոմենտը։ Այսպես օրինակ.— յեթե 50 ռուբլանոց պարտատոմսը շահել է 1000 ռուբլի, ապա այդ պարտատոմս շահողն ստանում է 1000 ռուբլի շահում, 50 ռուբլի պարտատոմսի արժեքը և այնքան տոկոսներ, ինչքան աճել են մինչև վիճակահանությունը։

Տոկոսներն այդ փոխառությամբ վճարվում են տարեկան յերկու անգամ. փետրվարի 1-ին և օգոստոսի 1-ին։

1932 թվի անտոկոսաբեր շահող փոխառություն

Փոխառությունը բաց է թողնվել 50 միլիոն ռուբլի գումարով, 10 տարի ժամանակով, 100 ռուբլու արժողությամբ պարտատոմսերով։ Ամբողջական պարտատոմսերն ունեն մասեր՝ 25 ռուբլու արժողությամբ

Այդ փոխառությամբ յուրաքանչյուր ամսի 15-ին, տեղի յեն ունենում շահումների վիճակահանություններ։ Ընդամենը տեղի կունենա 120 այդպիսի վիճակահանություններ։ Մինչև 1932 թվի հոկտեմբերի 1-ը, տեղի յեն ունեցել 5 վիճակահանություններ։

Յուրաքանչյուր վիճակահանությունում խաղարկ

վում են 925 շահումներ, 452700 ռուբլի գումարով։

Յուրաքանչյուր վիճակահանություններում կան՝

1 շահում 25 հազար ռուբլու
5 շահում 10 հազարական ռուբլու
10 շահում 5 հազարական ռուբլու
50 շահում 1 հազարական ռուբլու
100 շահում 500-ական ռուբլու
759 շահում 300-ական ռուբլու

Այդ փոխառության յուրահատկությունը կայանում է նրանում, վոր պարտատոմսի արժեքը մտնում է շահման գումարի մեջ։ Այսպես օրինակ.— 100 ռուբլանոց պարտատոմսի վրա ընկնում է 1000 ռուբլու շահում, ապա տրվում է միայն 1000 ռուբլի, այսինքն 900 ռուբլի շահման ձևով և 100 ռուբլի պարտատոմսի արժեքը։

### «Մոսխորհրդի շահող փոխառություն»

Փոխառությունը բաց է թողնվել 1929 թվին, 27,5 միլիոն ռուբլի գումարով, 10 տարի ժամանակով - մինչեվ 1939 թվի ապրիլի 1-ը, և իրացված է նախկին Մոսկվայի նահանգի աշխատավորության մեջ։

Այդ ժամկետից հետո փոխառությունը կհանգցվի Մոսխորհրդի կողմից։

Փոխառության ամբողջ յեկամուտը բաղկացած է շահումներից։ Պարտատոմսերը բաց են թողնվել 25 ռուբլու արժողությամբ։ Ամբողջական պարտատոմսերն ունեն մասեր՝ 5 ռուբլու արժողությամբ։ Պարտատոմսի յուրաքանչյուր մասը, տալիս է շահման համապատասխան մասը։ Այսպես օրինակ.— Յեթե ամբողջական պարտատոմսը շահել է 100 ռուբլի,



ապա 5 ռուբլու արժողությամբ պարտատոմսով վճարվում է շահման 1/5-ական մասը, այսինքն՝ 20 ռուբլի։ Շահման գումարից բացի, վճարվում է նաև պարտատոմսի արժեքը։

Ընդամենը տեղի յեն ունենալու 40 շահումների վիճակահանություններ։ Մինչեվ 1932 թվի – հոկտեմբերի 1-ը կատարվել են 13 շահումների վիճակահանություններ։ Շահումները լինում են 50, 100, 250, 1000 և 3000 ռուբլի։

* * *

Բացի վերոհիշյալ փոխառություններից, կան նաև այսպես կոչված հատուկ փոխառություններ, վորոնք բաց են թողնվել բացառապես տարբեր կազմակերպությունների և ձեռնարկությունների համար։

Այդ փոխառություններին վերաբերվում են.— 8 տոկոսային, 12 տոկոսային փոխառությունները, 1927 թվի փոխառությունը և 1928 թվի 11 տոկոսային փոխառությունը։

Այդ փոխառություններով, պետությունը վճարում է տոկոսներ։

## ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԴՈՒՐՍ ՅԵԿԱԾ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

փոխառություններ, վորոնք կառավարության կողմից հետ են գնվել և վորոնցով վճարումներ չեն կատարվում.

ա) «1922 թվի առաջին հացի փոխառություն» (բաց է թողնվել 1922 թվի մայիսի 20-ին, 10 միլիոն փութ հացահատիկով)

բ) «1923 թվի յերկրորդ հացի փոխառություն» (բաց է թողնվել 1923 թվի մարտի 22-ին, 100 միլլիոն փութ հաճարով).

գ) «Շաքարի փոխառություն» (բաց է թողնվել 1923 թվի նոյեմբերի 15-ին, մեկ միլլիոն փութ շաքարով).

դ) «Տրանսպորտային սերտիֆիկատներ» (բաց է թողնվել 1923 թվին 24 միլլիոն ռուբլու գումարով).

ե) «1925 թվի կարճ ժամկետային 5%-յա փոխառություն») բաց է թողնվել 10 միլլիոն ռուբլու գումարով),

զ) «1924 թվի գյուղացիական շահող փոխառությունը» բաց է թողնվել 1924 թվի ապրիլի մեկից, 30 միլլիոն ռուբլի գումարով, 1925 թվի ապրիլի 5-ից իրացվել է կրկին 40 միլլիոն ռուբլու).

## ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՎՈՐՈՆՔ ՄԱՐՎԱԾ ԵՆ, ԲԱՅՑ ՆՐԱՆՑՈՎ ՎՃԱՐՎՈՒՄ ԵՆ՝ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՐԺԵՔԸ, ՇԱՀՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ ՏՈԿՈՍՆԵՐԸ

ա) «1922 թվի առաջին շահող փոխառություն» բաց է թողնվել 100 միլլիոն ռուբլու գումարով, 10 սերիաներով (մասերով), յուրաքանչյուր սերիայում 10 միլլիոն ռուբլի:

1932 թվի հուլիսի 1-ին կայացավ շահումների վերջին վիճակահանությունը: 1932 թվի դեկտեմբերի 1-ից, փոխառությունը հանգցվում է ամբողջովին:

բ) «12%-ային գյուղացիական շահող փոխառություն» (բաց է թողնվել 1925 թվին, 100 միլլիոն ռուբլի գումարով):



Պարտատոմսերի արժեքը վճարվում է խնայդրամարկղների կողմից, մինչեվ 1937 թվի հոկտեմբերի 31-ը: Կուպոններով տոկոսները վճարվում են 10 տարվա ընթացքում, սկսած յուրաքանչյուր կուպոնի ժամկետից:

Շահումները տրվում են տաս տարվա ընթացքում, սկսած այն վիճակահանության օրից, վորում պարտատոմսը շահել է:

գ) «1924 թ. յերկրորդ շահող փոխառություն» (բաց է թողնվել 1924 թվի մարտի 15-ից, 100 միլիոն ռուբլի գումարով):

Պարտատոմսերի արժեքը վճարվում է տաս տարվա ընթացքում, սկսած յուրաքանչյուր կուպոնի ժամկետից: Շահումները տրվում են 10 տարվա ընթացքում, սկսած այն վիճակահանության օրից, վորում շահել է պարտատոմսը:

դ) «Գյուղացիական 3-րդ շահող փոխառություն» (բաց է թողնվել 1927 թվի մարտի 11-ին, 25 միլլիոն ռուբլի գումարով):

Պարտատոմսերի արժեքը վճարվում է խնայդրամարկղների կողմից մինչեվ 1940 թվի ապրիլի 1-ը, Կուպոններով տոկոսները վճարվում են տաս տարվա ընթացքում, սկսած յուրաքանչյուր կուպոնի ժամկետից:

Շահումները տրվում են տաս տարվա ընթացքում, սկսած այն վիճակահանության օրից, վորում շահել է պարտատոմսը:

յե) «1926 թվի անտոկոսաբեր-շահող փոխառություն» փոխառությունը բաց է թողնվել 30 միլլիոն ռուբլի գումարով, 5 տարի ժամանակով: 1931 թվին

ամբողջ փոխառությունը հանգցվում է լրիվ չափով։

Այդ փոխառությամբ յեկամուտները վճարվում են պարտատոմսատերերին միայն շահումների միջոցով։ Շահումները սահմանված են՝ 200-ից մինչև 100 հազար ռուբլի։

Շահման դեպքում պարտատոմսի արժեքը մնում է շահման գումարի մեջ։ Այսպես օրինակ.—յեթե 100 ռուբլանոց ամբողջական պարտատոմսի վրա ընկնում է 200 ռուբլու շահում, ապա վճարվում է միայն 200 ռուբլի։

Շահումների վերջին վիճակահանությունը կայացավ 1931 թվի սեպտեմբերի 30-ին։

Շահումներն ու պարտատոմսերի արժեքը վճարվում են տաս տարվա ընթացքում, սկսած վիճակահանության օրից։

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բոլոր փոխառությունների յեկամուտները՝ տոկոսներն ու շահումներն ազատվում են բոլոր տեսակի հարկերից ու տուրքերից, նույն թվում և յեկամտային հարկից։

Պարտատոմսատերը իրավունք ունի հանձնելու պարտատոմսերը, վորպես ժառանգություն-ցանկացած անձնավորության։ Այդ դեպքում, այդպիսի ժառանգությունն ազատվում է ժառանգության հարկից։

Պարտատոմսերը նվիրելու դեպքում, նվիրվողն ազատվում է նվիրատվության հարկի վճարումից։



## ՇԱՀՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՏՈԿՈՍՆԵՐՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ

Շահումներն ու տոկոսները կարելի յե ստանալ 10 տարվա ընթացքում, սկսած վիճակահանության օրվանից և կուպոնի ժամկետից, իսկ «Հնգամյակի 4-րդ ավարտական տարվա» փոխառությամբ մինչև 1947 թվի դեկտեմբերի 1-ը։

Շահումները վճարվում են շահումների վիճակահանության պաշտոնական աղյուսակն ստանալուց յերեք օրվա ընթացքում։

Շահումների պաշտոնական աղյուսակները տպագրվում են «ՆԳԿ-ի Իզվեստիա», «Էկոնոմիչեսկայա ժիզն» թերթերում և այն բնակավայրի թերթերում, ուր կատարվել են շահումների վիճակահանությունը։ Բացի դրանից շահումների պաշտոնական աղյուսակները տպագրվում են առանձին թերթիկներով և համախմբված աղյուսակներ-բրոշյուրներով, վորոնք ուղարկվում են գործարանեղկոմներին, գրադարաններին, խրճիթ-ընթերցարաններին, գործկոմներին, բանկերին, խնայդրամարկղներին և այլն։

Շահումների վճարումը կատարվում է վիճակահանության պաշտոնական աղյուսակն ստանալուց յերեք օր հետո, այն պատճառով, վոր վիճակահանության պաշտոնական աղյուսակում կարող են լինել վրիպակներ, վորոնք այդ ժամանակաընթացքում հայտնաբերվում և հրապարակվում են նույն այն թերթում, վորոնց մեջ առաջին անգամ հրապարակվել է վիճակահանության աղյուսակը։

Կուպոններով տոկոսների վճարման ժամկետները նշված են հենց իրենց կուպոնների վրա։

## ԹՎԵՐԻ ԱՌԱՋ ԴՐՎԱԾ ԶԵՐՈՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Պարտատոմսերի, շահումների աղյուսակների վրա, թվերի առաջ դրված զերոները ոչ մի նշանակություն չունեն։ Պարտատոմսերի վրա այդ բանն արված է, բացառապես պարտատոմսերը տպելու հարմարության, իսկ աղյուսակների վրա՝ շահումները ստուգելու հարմարության համար։

Օրինակ—00345 սերիայի պարտատոմսը, միևնույն 345 սերիայի պարտատոմսն է։

## ՇԱՀՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՏՈԿՈՍՆԵՐԸ ՎՃԱՐԵԼՈՒ ՏԵՂԸ

Մինչև 200 ռուբլու ներառյալ շահումները, վճարվում են բոլոր խնայդրամարկղներում։ 200-ից բարձր—մինչ 1000 ռուբլու շահումները (և այդ շահումների մասերը) վճարվում են շրջանային և քաղաքային խնայդրամարկղներում։

1000 ռուբլուց բարձր շահումները (և այդ շահումների մասերը) վճարվում են Մոսկվայի քաղաքային խնայդրամարկղների և պետվարկի վարչության պետփոխառությունների սեկտորի կողմից։

Խոշոր շահումն ստանալու համար, կարիք չկա մեկնել Մոսկվա։ Շահած պարտատոմսը կարելի յէ հանձնել տեղական խնայդրամարկղին, արժեքավոր ծրարով Մոսկվա ուղարկելու համար։



Ընդունված պարտատոմսի փոխարեն, խնայդրամարկղը տալիս է հատուկ ստորագրություն։ Խնայդրամարկղը շահումն ստանալուն պես, այդ մասին հատկապես տեղեկացնում է շահողին։

## ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՇԱՀՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ ՏԱԼԸ

Փոխառությունների և շահումների մասին տեղեկությունները տրվում են ձրի, ֆինանսական մարմինների, բանկերի, խնայդրամարկղների, փոստային հիմնարկների, Պետվարկին և խնայգործին օժանդակող հանձնաժողովների կողմից։

Բոլոր այդ կազմակերպություններին ուղարկվում են շահումների աղյուսակները։ Եթե որևէ պատճառով, տեղում չեն լինի վիճակահանության աղյուսակներ, ապա կարելի յէ դիմել շրջանային, յերկրային կամ հանրապետական խնայդրամարկղի և պետվարկի վարչությանը, վորոնք տալիս են անհրաժեշտ պարզաբանում և պատասխան շահումների և, ընդհանրապես պետական վարկի բոլոր խնդիրների վերաբերյալ։

## ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՈՎ

Ունեցած վիճակահանության աղյուսակով պարտատոմսերն ստուգելուց առաջ, հարկավոր է վորոշել, թե պարտատոմսատերն ինչ մասի պարտատոմսեր ունի և համապատասխանում է արդյոք վիճակա-

հանության աղյուսակն այս մասի պարտատոմսերին։

Չի կարելի փոխառության անտոկոսաբեր—շահող մասի պարտատոմսերն ստուգել տոկոսաբեր—շահող մասի աղյուսակներով և ընդհակառակը։

Ի միջի այլոց, այդպիսի սխալներ հաճախ են պատահում։

Աղյուսակում նշված են սերիաների համարները։ Հետևապես պարտատոմսերի սերիաների համարները պիտի համեմատել աղյուսակի մեջ տպագրված սերիաների հետ։ Յեթե այդ սերիաները համատեղվում են, ապա պիտի նայել վիճակահանության աղյուսակին, թե արդյոք չի նշված այնտեղ և պարտատոմսերի համարները, այնքան, որքան մի քանի փոխառություններով շահում են սերիաները, իսկ մի քանիսում էլ տվյալ սերիայի մեջ մտնող առանձին պարտատոմսերը։

Վիճակահանության աղյուսակների մեջ «Հնգամյակը չորս տարում» փոխառությունների բոլոր բաժինների պարտատոմսերը ստուգելիս, սերիայից բացի պիտի ուշադրություն դարձնել նաև պարտատոմսի համարի վրա։

«Հնգամյակը չորս տարում» փոխառության վիճակահանության աղյուսակներում, պարտատոմսերի համարները պիտի փնտրել միայն այն սերիաներում, որոնց կողքին դրված են աստղեր։

«Հնգամյակի 3-րդ վճռական տարվա» փոխառության պարտատոմսերի համարները ցույց են տրված սերիաների կողքին։ Այստեղ էլ ցույց է տրված նաև շահման գումարը։ Աստղերն էլ նշված են պարտա-



տոմսերի (և ոչ թե սերիաների) այն համարների մոտ, որոնք շահել են 20 ռուբլի։

Այսպես, յեթե «Հնգամյակը չորս տարում» փոխառության սերիայի համարը համատեղվում է աղյուսակի մեջ տպված համարի հետ, որի կողքին նշված է աստղ, այդ պարտատոմսատիրոջ պարտատոմսը շահել է 200 ռուբլուց ավելի։ Որպեսզի պարզել, թե ինչ գումար է ընկել այդ համարի պարտատոմսի վրա, անհրաժեշտ է ստուգել յերկրորդ աղյուսակը, որտեղ նշված են 200 ռուբլուց ավելի շահումները։

Յեթե, ըստ յերկրորդ աղյուսակի պարտատոմսի սերիայի համարից բացի, համատեղվում է պարտատոմսի համարը, նշանակում է պարտատոմսատիրոջ պարտատոմսը շահել է այն գումարը, որը տպագրված է այդ յերկրորդ աղյուսակի մեջ։ Յեթե չի համատեղվում, ապա պարտատոմսը շահել է այն գումարը, որը նշված է առաջին աղյուսակի մեջ։

Որինակ—պարտատոմսատերն ունի անտոկոսաբեր մասի 00510 սերիայի Նո․ 06 պարտատոմսը «Հնգամյակը չորս տարում» փոխառության (առաջին բաժնի) 7-րդ վիճակահանության 1-ին («A») աղյուսակում նշված է 200 ռուբլու շահում յեվ սերիայի համարի կողքին դրված է աստղ (00510*)։ Այդ նշանակում է, որ պարտատոմսատերը շահել է 200 ռուբլուց ոչ պակաս։ Բայց քանի, որ սերիայի համարի կողքին նշված է աստղ, ապա պիտի տեսնել, թե չի շահել արդյոք պարտատոմսատիրոջ պարտատոմսը 200 ռուբլուց ավելի։ Համեմատելով պարտատոմսի համարը յերկրորդ («Б») աղյուսակի մեջ

նշված համարի հետ, պարտատոմսատերը պարզում է, որ 00510 սերիայի Նո. 06-ը շահել է 1 հազար ռուբլի։ Եթե պարտատոմսատիրոջ այդ սերիայի պարտատոմսն ունենար ոչ թե 06 համար, այլ 01, 02, 03, 04, 05 և այլն, ապա նա կշահեր ոչ թե 1 հազար ռուբլի, այլ միայն 200 ռուբլի։

## ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼԸ Ի ԴԻՄԱՑ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ

Խնայդրամարկղները տալիս են փոխառություններ հետևյալ փոխառությունների գրավ դրված պարտատոմսով, 1927 թվի 10%-ային շահող փոխառության, 1929 թվի անտոկոսաբեր փոխառության, 1930 թվի 9%-ային շահող փոխառության, Մոսխորհրդի փոխառության և 1932 թվի շահող փոխառության պարտատոմսերով։

«Հնգամյակը չորս տարում» փոխառության բոլոր բաժինները, ներառյալ «Ինդուստրացման 3-րդ փոխառության պարտատոմսերով փոխատվությունները տրվում են, ինչպես վերը նշվեց, միայն օժանդակող հանձնաժողովների թույլատվությամբ։

Փոխատվությունները տրվում են պարտատոմսերի անվանական (պարտատոմսերի վրա գրված) արժեքի 60%-ի չափով։

Փոխատվությամբ օգտվելու համար, խնայդրամարկղները վերցնում են սահմանված չափով տոկոսներ։

Բացի «Հնգամյակը չորս տարում» փոխառության բոլոր բաժինների պարտատոմսերի, մյուս բոլոր փոխառությունների պարտատոմսերով փոխատվությունները տրվում են առանց ժամկետի։



Փոխատվությունն ստացողը կարող է ցանկացած ժամանակը մուծել այդպիսին մեկ անգամից, կամ մաս-մաս։

«Հնգամյակը չորս տարում» փոխառություններով, ներառյալ «Ինդուստրացման 3-րդ փոխառությունը», փոխատվությունները տրվում են 1 տարի ժամանակով։

Փոխատվության ժամկետը սահմանվում է օժանդակող հանձնաժողովի կողմից, գրավ դնելու համար թույլատվություն տալու ժամանակ։

Գրավ դրված պարտատոմսերի յեկամուտները՝ շահումներ և տոկոսներ, պատկանում են պարտատոմսերի տերերին։

## ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ Ի ՊԱՀ ԸՆԴՈՒՆԵԼԸ

Խնայդրամարկղերն ընդունում են փոխառությունների պարտատոմսերն ի պահ տնօրինությամբ։

Տնօրինությունը կայանում է նրանում, որ խնայդրամարկղը ստուգում է շահումներն այդ պարտատոմսերով և շահումների մասին հայտնում է պարտատոմսերի տերերին։

Պարտատոմսերի պահ տալը խնայդրամարկղում շահավետ է պարտատոմսատիրոջ համար։ Բանը նրանումն է, որ պարտատոմսերն անվանական չեն և պատկանում են այն անձանց, որոնց մոտ այդպիսիք գտնվում են։ Դրա համար էլ պարտատոմսերը կորցնելու և գողանալ տալու դեպքում, չափազանց դժ-

վար է ապացուցել, թե իրոք ուժն են պահպանում տվյալ պարտատոմսերը: Այստեղից, պարտատոմսերի պահ տալը խնայդրամարկղում, յերաշխավորում է պարտատոմսերը կորուստից:

## ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Պարտատոմսերն ու կուպոնները վճարունակ են համարվում, այսինքն արժեք են ներկայացնում, յեթե ողջախից պահպանել են Ֆինանսների ժողկոմի ստորագրությունը, արժեքը, պարտատոմսերի համարները և սերիաները, փոխառության անվանումը և բացի դրանից, կուպոնի վրա՝ վճարման ժամկետը:

## ՓՉԱՑԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ

Աննշան կերպով փչացած պարտատոմսերը, (յուղոտված, թանաքոտված և այլն), վորոնք վճարունակությունը չեն կորցրել, ընդունվում են խնայդրամարկղների կողմից, Պետնիշում վերատպելու համար:

Վերատպելու համար գանձվում է աննշան վճար և բացի դրանից, պարտատոմսը Պետնիշ և յետ ուղարկելու համար փոստային ծախսերը:

## 1935 ԹՎԻՆ ԿԱՅԱՑՎՈՂ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. «Հնգամյակի 4-րդ ավարտական տարվա փոխառության» առաջին վիճակահանությունը, կայանալու յե հունվարին, յերկրորդը-մարտին և հետագայում յերեք ամիսը մեկ անգամ:



2. «Հնգամյակի 3-րդ վճռական տարվա» փոխառության վիճակահանությունները կայանալու յեն յուրաքանչյուր ամսի 10-11-ին:

3. Յուրաքանչյուր յերեք ամիսը մեկ անգամ կայանալու յեն «Հնգամյակը չորս տարում» փոխառության վիճակահանությունները:

4. Յուրաքանչյուր ամսի 15-ին, կայանալու յեն 1932 թվի շահող փոխառության վիճակահանությունները:

| ԱՄԻՍՆԵՐ / ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ | | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2-րդ հնգամյակի փոխառություն | 1-ին տարվա | | | | | 1-2-րդ վիճ. 17—20 | | | | 3-4-րդ վիճ. 17—20 | | | 5-րդ վիճ. 17—20 |
| | 2-րդ տարվա | | | 6-րդ վիճ. 17—18 | | 7-րդ վիճակ. 17—20 | | | | 8-րդ վիճակ 17—20 | | | 9-րդ վիճակ. 17—20 |
| 4-րդ ավարտական տարվա փոխառություն | | 9-րդ վիճ. 11—12 | | | 10-րդ վիճակ. 11—12 | | | 11-րդ վիճակ 11—12 | | | 12-րդ վիճակ. 11—12 | | |
| 3-րդ վճռական տարվա փոխառություն | | 36 րդ վիճակ. 10—11 | 37-րդ վիճակ. 10—11 | 38 րդ վիճակ. 10—11 | 39-րդ վիճակ. 10—11 | 40-րդ վիճակ. 10—11 | 41 րդ վիճակ 10—11 | 42-րդ վիճակ. 10—11 | 43-րդ վիճակ. 10—11 | 44-րդ վիճակ. 10—11 | 45-րդ վիճակ. 10—11 | 46 րդ վիճակ 10—11 | 47-րդ վիճակ. 10—11 |
| Հնգամյակը 4 տարում և 3 րդ ենթուսար. փոխառություն | | | 17-րդ վիճակ. 17—20 | | | 18-րդ վիճակ 17—20 | | | 19-րդ վիճակ 17—20 | | | 20-րդ վիճակ. 17—20 | |
| 1932 թ. պետական շահող փոխառություն | | 33 րդ վիճակ. 15 ին | 34-րդ վիճակ 15 ին | 35 րդ վիճակ. 15-ին | 36-րդ վիճակ 15 ին | 37-րդ վիճակ 15-ին | 38 րդ վիճակ. 15-ին | 39-րդ վիճակ. 15-ին | 40-րդ վիճակ 15-ին | 41 րդ վիճակ. 15-ին | 42-րդ վիճակ 15-ին | 43 րդ վիճակ 15-ին | 44-րդ վիճակ. 15-ին |
| Պետական 9-տոկոսային շահող 1930 թ. փոխառություն | | 20 րդ վիճակ. 15-ին | | | վ21-րդ իճակ. 15 ին | | | 22 րդ վիճակ. 15 ին | | | 23-րդ վիճակ 15 ին | | |
| Պետական 1929 թ. շահող փոխառություն | | | | 24 րդ վիճակ 20 ին | | | 25-րդ վիճակ 20 ին | | | 26 րդ վիճակ. 20-ին | | | 27-րդ վիճակ. 20-ին |
| Պետական 10-տոկոսային 1927 թ. շահող փոխառություն | | 30-րդ վիճակ. 20-ին | | | | | | | | | | | |

ԳՐԻՐ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻԴ ՀԱՄԱՐՆԵՐԸ

ՀԵՏԵՎԻՐ ՇԱՀՈՒՄՆԵՐԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ